Հավելված
ՀՀ կառավարության 2018 թվականի
հուլիսի 26-ի N 830 - Ա որոշման

Կ Ա Ր Գ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ՍՏՈՐԱԳՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ
ԼԻԱԶՈՐԱԳԻՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ

1. Միջազգային պայմանագիր ստորագրելու համար լիազորագիրը տրամադրում է Հայաստանի Հանրապետության վարչապետը կամ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության անդամ չհանդիսացող պաշտոնատար անձանց դեպքում:

2. Հայաստանի Հանրապետության վարչապետը լիազորագիրը տրամադրում է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության գրության հիման վրա, որին կցվում է իրավասու մարմնի համապատասխան առաջարկությունը և, ըստ անհրաժեշտության, Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության կարծիքն այդ առաջարկության նպատակահարմարության մասին:

3. Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարը լիազորագիրը տրամադրում է իրավասու մարմնի առաջարկության հիման վրա:

4. Լիազորագիրը կազմվում է հայերեն: Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունն ապահովում է լիազորագրի օտար լեզվով թարգմանությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ